Տարածաշրջանային վերլուծություն

Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա

Տարածաշրջանի երկրներին բնորոշ են իշխանության ճյուղերի տարանջատման ոչ բավարար աստիճանը, ընտրական գործընթացներում պետական ռեսուրսի չարաշահումը, կուսակցությունների ոչ թափանցիկ ֆինանսավորումը և շահերի բախումը:

Տարածաշրջանի ընդամենը երեք երկրների ԿԸՀ արժեքն է գերազանցում գլոբալ միջինը (43-ի հավասար). դրանք են՝ Վրաստանը (56 միավոր), Բելառուսը (45 միավոր) և Չեռնոգորիան (45 միավոր):

Վերահսկողական պետական մարմինների նկատմամբ ուժեղ քաղաքական ազդեցությունը, դատական իշխանության անկախության անբավարար մակարդակը և մամուլի սահմանափակ ազատությունը նպաստում են նրան, որ տարածաշրջանի շատ երկրներում առկա է իշխանության գերկենտրոնացում:

Չնայած Եվրոպական Միությանն անդամակցելու ձգտումներին՝ տարածաշրջանում ընդգրկված արևմտաբալկանյան վեց երկրների և Թուրքիայի ԿԸՀ արժեքները չեն բարելավվել:

2012 թ. համեմատ Թուրքիայի ԿԸՀ արժեքը նվազել է 10 միավորով՝ 2019-ին հասնելով 39-ի, ինչը նշանակալի նահանջ է: Նույն ժամանակահատվածում Բոսնիա և Հերցեգովինայի ԿԸՀ արժեքը նվազել է 6 միավորով և այժմ հավասար է 36-ի: Քաղաքական կամքի բացակայությունը և գործող օրենքների և կարգավորումների կիրարկման որակի անկումը հանդիսանում են լուրջ մարտահրավերներ այդ երկրների համար:

Սկսած 2012 թվականից՝ Բելառուսը (45 միավոր), Ղրղզստանը (30 միավոր) և Ուզբեկստանը (25 միավոր) նշանակալիորեն բարելավել են ԿԸՀ իրենց արժեքները: Սակայն այս երեք նախկին խորհրդային հանրապետություններում շարունակում են տեղ գտնել պետության զավթման երևույթը և տապալվել իշխանության ճյուղերի միջև զսպման և հավասարակշռման մեխանիզմները:

Չնայած նրան, որ Ուզբեկստանը թուլացրել է լրատվամիջոցների նկատմամբ որոշ սահմանափակումները, այն շարունակում է մնալ որպես աշխարհի ամենաավտորիտար պետություններից մեկը:

Պետության զավթումը և իշխանության կենտրոնացումն առանձին անհատների ձեռքերում շարունակում են մնալ հիմնական խոչընդոտները տարածաշրջանում: Կոռուպցիան կարող է արդյունավետ կերպով հաղթահարվել, եթե քաղաքական առաջնորդների համար առաջնահերթություն դառնան հանրային շահերը, և իրենք ծառայեն որպես թափանցիկության օրինակ:

Տարածաշրջանի ուշադրության արժանի երկրներ

Հայաստան

Նախորդ տարվա համեմատ Հայաստանի ԿԸՀ արժեքն աճեց 7 միավորով՝ հավասարվելով 42-ի: 2018 թ. հեղափոխությանը և նոր խորհրդարանի ձևավորմանը հետևեցին հակակոռուպցիոն քաղաքականության բարեփոխումների խորացմանն ուղղված խոստումնալից զարգացումները:

Չնայած այդ դրական զարգացումներին՝ շահերի բախումը և հանրային ոլորտում ոչ թափանցիկ և ոչ հաշվետու գործողությունները շարունակում են մնալ որպես խոչընդոտներ՝ երկրում կոռուպցիային վերջ տալու ճանապարհին:

Քաղաքական բարեվարքության բարելավումը կպահանջի ժամանակ և միջոցներ, իսկ իրավապահ մարմինների և դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության մեծացումն այն վճռորոշ առաջին քայլերն են, որոնք կապահովեն իշխանության ճյուղերի միջև զսպումները և հավասարակշռումները և կբարձրացնեն հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետությունը:

Հայաստանում քաղաքական կամքը և հակակոռուպցիոն քաղաքականության կիրարկումը կարևոր են դառնում այն դեպքում, երբ առանցքային նշանակություն ունեն քաղաքական մշակույթի և կառավարման ֆունդամենտալ և անհապաղ փոփոխությունները:

Կոսովո

ԿԸՀ 2019 թ.համաթվի 36 արժեք ունեցող Կոսովոյի խորհրդարանում տեղի է ունենում իշխանափոխություն, որը կարող է դառնալ փոփոխությունների հնարավորություն: Տարիներով իշխանություններին և երկրում գործող միջազգային կազմակերպություններին կոռուպցիայի հիմնախնդիրը չլուծելու անկարողության մեջ քննադատող Ինքնորոշման (*Vetevendosje*) կուսակցությունը, որը վերջին խորհրդարանական ընտրությունների արդյունքում ստացավ խորհրդարանում տեղերի մեծամասնությունը, այժմ հնարավորություն ունի ապացուցելու կոռուպցիայի դեմ պայքարելու իր հանձնառությունը:

Նախընտրական քարոզչության ժամանակ, կուսակցությունն այն սակավաթիվ քաղաքական ուժերից մեկն էր, ով բացահայտեց նախընտրական քարոզչության իր ծախսերը:

Սակայն դեռ պետք է սպասել՝ տեսնելու նոր կառավարությունը կկատարի արդյոք քաղաքական բարեվարքության ավելի բարձր չափանիշներ սահմանելու իր խոստումը: Դա նա կարող է անել, եթե վերջ տա պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների տնօրենների քաղաքական նկատառումների վրա հիմնված նշանակումների սովորական դարձած պրակտիկային և սահմանի կուսակցությունների կողմից իրենց ֆինանսավորման բացահայտման ավելի խիստ իրավական պարտավորություններ:

Կոսովոյում նոր խորհրդարանը հնարավորություն ունի վերացնել նախորդ վարչակարգի թերությունները և իր համար առաջնահերթություն դարձնել հակակոռուպցիոն քայլերը: